ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№__2021-Ա___ « 21 » մայիսի 2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆՆ ԻՍՊԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ՄԱԴՐԻԴ ՈՒ ԲԱՐՍԵԼՈՆԱ ՔԱՂԱՔ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով ՀՀ արտաքին գործերի նախարարության 19.05.2025 թվականի № 1101/26844-25 գրությամբ ստացված հրավերը՝ երկկողմ համագործակցության հարցեր քննարկելու նպատակով.

1.Երևանի քաղաքապետարանի պատվիրակությանը 2025 թվականի հունիսի 1-ից 4-ը ներառյալ գործուղել Իսպանիայի Թագավորության մայրաքաղաք Մադրիդ հետևյալ կազմով.

Տիգրան Ավինյան	Երևանի քաղաքապետ
Լուսինե Դայան	Երևանի քաղաքապետի խորհրդական
Դավիթ Գևորգյան	աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ
Մալվինա Պողոսյան	աշխատակազմի լրատվության վարչության սոցիալական մեդիա համակարգող

2.Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանին 2025 թվականի հունիսի 1-ից 2-ը ներառյալ գործուղել Իսպանիայի Թագավորության մայրաքաղաք Մադրիդ, իսկ հունիսի 3-ից 4-ը ներառյալ՝ Իսպանիայի Թագավորության Բարսելոնա քաղաք:

3.Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվում են Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի միջոցների հաշվին:

4.Երևանի քաղաքապետի գործուղման ծախսերի փոխհատուցումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման N 1 հավելվածի 13-րդ կետի համաձայն:

5.Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանի բացակայության ընթացքում քաղաքապետի տեղակալի պարտականությունների կատարումը վերապահել Երևանի քաղաքապետի տեղակալ Սարգիս Մադաթյանին:

6.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ Դավիթ Գևորգյանի բացակայության ընթացքում արտաքին կապերի վարչության պետի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության արարողակարգի բաժնի պետ Լուսինե Ղարիբյանին:

7.Գործուղումից վերադառնալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում, փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը և դրանք հավաստող փաստաթղթերը ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ